Հավելված 2՝
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.06.2020թ. թիվ 71-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Նախագահի առաջին տեղակալ	Նախագահի տեղակալ	Ֆինանսական տնօրեն	Աշխատակազմի ղեկավար	ՀՊԳ ղեկավար
▪ *Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների Պալատի (բացառությամբ ՀՊԳ հարցերի) աշխատանքների համակարգում.* ▪ *Պալատի և միջազգային կառույցների միջև հարաբերությունների համակարգում.* ▪ *Պալատի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովում.* ▪ *Նորմատիվ իրավական ակտերի կամ դրանց նախագծերի վերաբերյալ Պալատի փորձագիտական խմբի դիրքորոշումների մշակում և ներկայացում.* ▪ *Փաստաբանների նկատմամբ ներկայացված բողոքների քննարկման կազմակերպում.* ▪ *Որակավորման քննությունների կազմակերպմանը և անցկացմանն օժանդակություն:* ▪ *ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի նիստերի անցկացմանն օժանդակություն:*	▪ *Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ ՀՊԳ) վերահսկողական աշխատանքների համակարգում.* ▪ *Հանրային պաշտպանի գրասենյակի հետ կապված պետական մարմինների հետ հարաբերություններում Պալատի աշխատանքների համակարգում.* ▪ *Պալատի Գիտավերլուծական կենտրոնի, Երիտասարդական խորհրդի, Մարզամշակութային ակումբի, Պալատի ակումբի, ինչպես նաև այլ մշտական կամ ժամանակավոր հանձնախմբերի, հանձնաժողովների, ակումբների, աշխատանքային խմբերի կամ այլ կառույցների աշխատանքների համակարգում.* ▪ *Պալատի մարզային համակարգման կազմակերպման օժանդակություն:*	▪ *Պալատի բյուջեի կառավարում.* ▪ *Պալատի ֆինանսատնտեսական միջոցների կառավարում.* ▪ *Ֆինանսական հայտերի և հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացի կազմակերպում.* ▪ *Մուտքավճարների, անդամավճարների և այլ վճարների հավաքագրման գործընթացի կազմակերպում.* ▪ *Պալատի խորհրդի ընթացիկ նիստերի (բացառությամբ կարգապահական գործերով նիստերի) սպասարկում.* ▪ *Պալատի կայքի զարգացման ապահովում:*	▪ *Պալատի աշխատակազմի ընդհանուր ղեկավարում, այդ թվում՝ Պալատի աշխատակիցների աշխատանքային կարգապահության նկատմամբ հսկողության իրականացում.* ▪ *Պալատի աշխատակազմի (այդ թվում՝ ՀՊԳ) գործավարության, այդ թվում՝ փաստաթղթաշրջանառության և ներքին գործավարության կազմակերպման և իրականացման նկատմամբ հսկողություն.* ▪ *Պալատի մասնակցությամբ գործերով դատական ներկայացուցչության կազմակերպում.* ▪ *Անդամավճարների արտոնությունների տրամադրման գործընթացի կազմակերպում.* ▪ *Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի աշխատանքների համակարգում.* ▪ *Փաստաբանների պարտադիր վերապատրաստման դասընթացների կազմակերպում.* ▪ *ՀՀ փաստաբանական դպրոցի հետ հարաբերությունների համակարգում:*	▪ *ՀՊԳ ընթացիկ աշխատանքների կազմակերպում.* ▪ *Հանրային պաշտպանների միջև աշխատանքի բաժանում.* ▪ *Հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշումների ընդունում.* ▪ *Հանրային պաշտպանների կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու որակի և ժամկետների նկատմամբ հսկողության իրականացում:*